ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/37-1

ք.Երևան «30» 03 2021թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս Վ. Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼ ՍԹԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Հայրապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է վերելակների տեխնիկական սպասարկման և ընթացիկ վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1, N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1, N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1, N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1, N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[20]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1, N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«Էլ Սթար» ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան	Ք. Երևան Մառի փ. Շ9, բն10
փող. 109/8	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական	Հ/Հ 1570064362220100
վարչություն	ՀՎՀՀ 00933573
Հ/Հ 900011019313	Տնօրեն՝
ՀՎՀՀ 00153247	
Գլխավոր քարտուղար՝	
_____Վ. Օհանյան	_____Հ. Հայրապետյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ

Հավելված N 1
«30» 03 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/37-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման	
						Հասցեն	Ժամկետը**
1	50751100-1	Տես Հավելված 1.1	դրամ	*350000*	Պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի հիման վրա	ՀՀ քաղաք Երևան Դավթաշեն 4,Ա.Միկոյան 109/8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 15.12.2021թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
Ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019313
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

Վ. Օհանյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Էլ Սթար» ՍՊԸ
Ք. Երևան Մառի փ. Շ9, բն10
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570064362220100
ՀՎՀՀ 00933573
Տնօրեն՝

Հ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«30» 03 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/37 -1 ծածկագրով պայմանագրի

ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Արտակարգ իրավիճակների նախարարության վարչական 1-ին մասնաշենքի շենքում տեղակայված «SHINDLER 3300 AP, Traction lift without mashine room» մակնիշի թվով 1 մարդատար վերելակի տեխնիկական սպասարկում և ընթացիկ վերանորոգում *(նոմինալ բեռնաբարձրությամբ, 1,0 մ/վ խցիկի շարժման նոմինալ արագությամբ, 1KS կառավարման համակարգով , 9- հարկային կանգառով՝ գործ Անխափան աշխատանքն ու անվտանգ շահագործումն ապահովելու և վթարներն ու աշխատանքի խափանումները կանխարգելելու նպատակով՝ վերելակների ամբողջական տեխնիկական զննություն ու սպասարկում՝* ***համաձայն աղ.1.1-ի*** *, (Կատարողի ուժերով ու միջոցներով):*

- *Վթարների ու աշխատանքի խափանումների վերաբերյալ Պատվիրատուի կանչերին արձագանքում (մասնագետի ժամանում)՝ համապատասխան կանչի պահից ոչ ուշ, քան 30 րոպեի ընթացքում (Կատարողի ուժերով ու միջոցներով):*
- *Աշխատանքի խափանման վերացում՝ համապատասխան կանչի պահից ոչ ուշ, քան 2 ժամվա ընթացքում (Կատարողի ուժերով ու միջոցներով):*
- *Վթարի վերացում՝ համապատասխան կանչի պահից՝ ոչ ավել, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում (Կատարողի ուժերով ու միջոցներով):*
- *Անսարքության վերացում (վերելակների պլանային վերանորոգում)՝* ***համաձայն աղ.1.2ի*** *ըստ անհրաժեշտության՝ աշխատանքները սկսելու համար Պատվիրատուի կողմից սահմանված պահից ոչ ավել, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում (Կատարողի ուժերով ու միջոցներով):*
- *Անսարքության վերացում (վերելակների ընթացիկ վերանորոգում)՝ ըստ անհրաժեշտության կամ Պատվիրատուի պահանջով՝ աշխատանքները սկսելու համար Պատվիրատուի կողմից սահմանված պահից ոչ ավել, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում (Պատվիրատուի կողմից ձեռբերվող պահեստամասերով կամ Կատարողի կողմից* ***համաձայն աղ.1.3-ի*** *անվճար տրամադրվող պահեստամասերով):*
- *Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում՝ մշտապես:*

  *** Կատարողը ծառայությունները մատուցում է SHINDLER ֆիրմայի կողմից տրամադրված համապատասխան որակավորման սերտիֆիկատի առկայությամբ մասնագետների կողմից:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

No	Աշխատանքի անվանումը	Պարբերականությունը
1	Վերելակի նորմալ աշխատանքային ռեժիմի գնահատում խցիկից	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
2	Համակարգի գրառումների պատմության վերլուծություն	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
3	Անվտանգության համակարգի բաղադրիչ մասերի ստուգում և կարգավորում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
4	Վերելակի հորանի զննում, մաքրում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
5	Բոլոր հեղուս-մանեկային միացումների ստուգում, շտկում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
6	Շարժիչի դիրքի ստուգում և կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ

7	Վերելակի վերամբարձ կարապիկի դիտարկում, կարգաբերում:	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
8	Ավտոմատ էվակուացիայի ստուգում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
9	Հակակշռի մեխանիզմների հետազոտում և կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
10	Հակակշռի անվտանգության համակարգի ստուգում և կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
11	Արագության գերազանցման սահմանափակչի մետաղական անվակի մաշվածության զննում և կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
12	Արագության գերազանցման սահմանափակչի մետաղական ճոպանի մաշվածության զննում, երկարացման զննում և կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
13	Խցիկի օդափոխության համակարգի ստուգում և մաքրում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
14	Խցիկի դռան կառավարման համակարգի և մեխանիզմի ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
15	Կրող գոտիների ընդհանուր զննում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
16	Կրող գոտիների երկարացման ստուգում և գնահատում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
17	Կրող գոտիների ծգվածության ստուգում և կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
18	Կրող գոտիների սահքի առկայության ստուգում և մաքրում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
19	Կրող գոտիները վթարային վիճակում գտնվելու ժամանակ անվտանգության սարքավորումների աշխատանքի ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
20	Կրող գոտիներԻ ամրացման համակարգի մեջ մտնող զսպանակների ստուգում, բալանսի կարգավորում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
21	Հորանի ինֆորմացիոն համակարգի ստուգում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
22	Ճանապարհորդող մալուխի զննում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
23	Արգելակների ստուգում և Կարգաբերում (զսպանակների ամբողջություն, հոդակապերի միացում, լծակները, մեջդիրների մաշվածության)	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
24	Էլ.սարքավորումների դիտարկում, մաքրում Փոշուց և աղտոտվածությունից, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
25	Էլ. թողարկիչների և ռելեների կոնտակտորային համակարգի ստուգում:	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
26	Կարապիկի և էլ.սարքավորումների ստուգում վերելակի աշխատանքի ընթացքում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
27	Հորանային դռների Մեխանիկական համակարգի և փականների ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
28	Հորանային դռների համակարգի մեջ մտնող էլեկտրական Համակարգերի ստուգում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
29	Խցիկի դռների Մեխանիկական համակարգի և փականների ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
30	Խցիկի դռների համակարգի մեջ մտնող էլեկտրական Համակարգերի ստուգում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
31	Խցիկի և հորանի դռների աշխատանքի ստուգում միավորված ռեժիմում, դրանց կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
32	Տվիչների և դրոշակների ստուգում միավորված ռեժիմում՝ վերելակի ընթացքի ժամանակ	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
33	Խցիկի դռների դիտարկում աշխատանքի ընթացքում, դրանց կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ

34	Վերելակի հորանի էլ.լուսավորության ստուգում և կապերի փոխարինում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
35	Մետաղական ճոպանների միացման համակարգի ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
36	Վերելակի աշխատանքի ստուգում հարկային կանչերի և խցիկի ներսի կոճակներով, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
37	Մեքենայական սրահի բոլոր էլ. սարքավորումների դիտարկում, շարժական սարքավորումների լարերի միացման ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
38	Հիմական ճոպանատար անիվի առվակների մաշվածության ստուգում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
39	Խցիկի և հակակշռի ուղղորդիչ ներդիրների մաշվածության ստուգում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
40	Խցիկի և հակակշռի ուղղորդների ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
41	Հորանում գտնվող էլ. լարերի վիճակի ստուգում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
42	Խցիկի անկման որսիչների դիտարկում, ստուգում և կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
43	Հորանի Մաքրում և աղբի հեռացում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
44	Խցիկի և հակակշռի ուղղորդների յուղման համակարգի դիտարկում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
45	Խցիկի առաջին և վերջին հարկերում գտնվելու դեպքում վթարային անջատիչների ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
46	Վերելակների սարքավորումների մեջ գտնվող բոլոր առանցքակալների Ստուգում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
47	Խցիկի անկման որսիչների աշխատանքի ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ
48	Խցիկի գերբեռնվածության համակարգի աշխատանքի ստուգում, կարգաբերում	շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1.2

No	Աշխատանքի անվանումը	
1	Վերելակի հորանի դռան ուղղորդող բաշմակների փոխարինում նորով	36հատ
2	Վերելակի խցիկի ուղղորդող բաշմակների փոխարինում նորով	4 հատ
3	Էվակուացիոն մարտկոցների (BB Battery HR 15-12) փոխարինում նորով	2 հատ

Աղյուսակ 1.3

No	Աշխատանքի անվանումը	Պարբերականությունը
1	Արագության սահմանափակիչի ճոպան	Ըստ անհրաժեշտության
2	Վերելակի խցիկի դռան էլ. կոնտակտներ	Ըստ անհրաժեշտության
3	Վերելակի Հորանի դռան էլ. կոնտակտներ	Ըստ անհրաժեշտության
4	Հորանում Գտնվող Հարկերի ճանաչման դրոշակներ	Ըստ անհրաժեշտության
5	Էլ. Պահարանում գտնվող եռաֆազ ավտոմատներ	Ըստ անհրաժեշտության
6	Էլ. Պահարանում գտնվող երկֆազ ավտոմատներ	Ըստ անհրաժեշտության
7	Վերելակի խցիկի լուսավորման համակարգեր	Ըստ անհրաժեշտության
8	Վերելակի խցիկի հատակներ	Ըստ անհրաժեշտության
9	Էլ Պահարանում գտնվող ապահովիչ	Ըստ անհրաժեշտության
10	Վերելակի հորանի էլ.լուսավորության համակարգեր	Ըստ անհրաժեշտության
11	Խցիկի և հակակշռի ուղղորդների յուղման համակարգեր	Ըստ անհրաժեշտության
12	Վերելակի Հորանի կանչի կոճակի էլ. լարեր	Ըստ անհրաժեշտության
13	Վերելակի Խցիկի կանչի կոճակի էլ. լարեր	Ըստ անհրաժեշտության
14	Վերելակի Խցիկի դռան փոկանիվ	Ըստ անհրաժեշտության
15	Վերելակի Խցիկի դռան մետաղական ճոպան	Ըստ անհրաժեշտության

Հավելված N 2
« 30 » 03 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/37-1 ծածկագրով պայմանագրի

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50751100-1	Վերելակների տեխնիկական սպասարկման և ընթացիկ վերանորոգման ծառայություններ	35000	122500	122500	122500	210000	210000	210000	350000	350000	350000	350000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների
նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան
փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011019313
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Վ. Օհանյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Էլ Սթար» ՍՊԸ
Ք. Երևան Մառի փ. Շ9, բն10
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570064362220100
ՀՎՀՀ 00933573
Տնօրեն՝

_____Հ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«30» 03 2021 թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/37 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 30 » 03 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/37 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն